№ 77 ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 30 **1899** ՈՒՐԲԱԹ ԱՊՐԻԼԻ 30 № 77

ՔՍԱՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція „Мшакъ".
Կամ Tiflis, Rédaction „Mschak".
Տէլէֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.
Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Լրացուցիչ կէտեր.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլ. Նամակ Նուխուց. Նամակ Վաղարշապատից. Նամակ Ջիբրայէլի գաւառից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Կեղծումներ. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Խնդիրների շուրջը:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ԿԷՏԵՐ

—

Մեր երկրի ամենալուրջ և տաղանդաւոր իրաւաբաններից մէկը, Վ. Իվ—նկօ, տպագրեց տեղական „Новое Обозрѣніе" լրագրում մի շարք յօդուածներ այն պայմանների մասին, որոնց մէջ զարգանում է կովկասեան աւազակութիւնը և այն միջոցների մասին, որոնք կարող են բարելաւել ներկայ անմխիթար վիճակը: Հեղինակը անբաւարար է գտնում այն դատավարական և վարչական սիստեմը, որ նրա պատակայարմար է ճանաչվել մինչև այժմ և որը ոչ միայն անկարող է եղել զսպել նախկին աւազակութիւնները, այլ և այժմ ականատես է մեր երկրի այդ կատաղի չարիքի աւելի ևս լայն զարգացման: Խիստ պատիժները, հալածելու սովորական ձևերը, կախաղանը, ծեծը և զրկանքների ենթարկելը—չը վերջացրին աւազակութիւնը և սա մնաց մի հանելուկ, որի լուծելը մեծ մտատանջութիւն է պատճառում թէ պետական և թէ իրաւաբանական շրջաններին:

Յարգելի իրաւաբանի կարծիքով այդ կնճռոտ հարցը լուծելու համար պէտք է ծանօթանալ Անդրկովկասի ժողովրդի, մասնաւորապէս թուրք ժողովրդի իրաւական հասկացողութիւնների ու սովորական հայեացքների հետ և դատավարական գործերի մէջ մտցնել բարեփոխութիւններ, որպէս զի դատավարութիւնը գործնականապէս առաջացնի բարերար հետևանքներ և պակասեցնի յանցանքների թիւը, մինչդեռ այժմ նա չէ գոհացնում ազգաբնակութեանը և յաճախ առիթ է դառնում յանցանքների շարունակութեան: Օրինակ, կարելի էր օգնել այդ գործին հետևեալ միջոցներով: Եթէ դատաւորներին իրաւունք տրված լինէր պատիժներ սահմանելու ժամանակ չը սղմվել նեղ շրջանակում, այլ ընտրել այդ պատիժները աւելի լայն շրջանից, քան մինչև այժմ կատարվում է, դատաւորը կարող կը լինէր գործի էութեան և հանգամանքներին նայած՝ նշանակել այնպիսի պատիժ, որ համապատասխանէր տեղական իրաւաբանական հասկացողութիւններին: Եթէ դատաւորը կարողանար անպայման աքսորը դէպի Սիբիր փոխարինել ժամանակաւոր աքսորով դէպի ներքին նահանգները, նա չէր դրդի աքսորականներին հնարներ որոնել Սիբիրից փախչելու և վերադարձից յետոյ մշտական աւազակ դառնալու: Եթէ դատաւորի հետ միասին ներկայ լինէին դատավարութեանը տեղական ազգաբնակութեան կողմից ընտրված երկու անձ, իբրև պատուաւոր դատաւորներ, նրանք մեծապէս կօգնէին նպատակայարմար վճիռ կայացնելու: Նոյն բարի հետևանքը կը ստացվէր, եթէ գաւառամասերի գլխաւորները նշանակվէին բարեխիղճ իրաւաբաններից, քննիչներից ու դատախազի օգնականներից և եթէ նրանց իրաւունք տրվէր հաշտութեամբ վերջացնել գործերը, երբ կարող է կայանալ հաշտութիւն:

Տեղական հանգամանքները ամենևին արգելք չեն կարող լինել դատավարութեան ամենաբարձր կազմակերպութիւնը գործադրելու մեր երկրում: Իրաւաբանական գիտութեան նշանաւոր արդիւնքները կարող են պատուաստվել և մեր երկրում: Միայն ցանկալի է՝ որ տեղական առանձնայատկութիւնները աչքի առնվեն այն մարդկանց կողմից, որոնց յանձնված է արդարադատութեան գործը և այդպիսով հող պատրաստվի ազգաբնակութեան իրական աւելի բարձր զարգացման համար ապագայում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԱՄՈՒԼ

—

Հեռագիրը հաղորդեց, որ Թագաւոր Կայսրի հրամանով մտցրված է Կարմիր Խաչի ընկերութեան կասսան 1,500,000 ռուբլի Ռուսաստանի սովատանջներին օգնելու համար: Կայսերական այս նոր շնորհը «С.-Пет. Вѣдом.» լրագիրը ողջունում է հետևեալ խօսքերով.

Այսօր փայլուն և ուրախաւէտ տօնական օր է: Մեզ շրջապատող ծանր իրականութեան մատնացնող կիսամթութեան մէջ նորից ճառագայթների մի խուրձ մտաւ. անքերբիութիւնից վնասված նահանգներից Թագաւորի սրտին աւելի պարզ է հասնում վշտալի ճշմարտութիւնը թշուառութեան չափերի մասին և նորից դէպի այդ նահանգները կարկառվում է օգնութեան առատ ձեռքը և նորից ռուս մարդիկ, խաչակնքելով, զգում են թէ ինչպէս աւելի և աւելի ամրանդվում է կապը փորձանքի ենթարկված ժողովրդի և Նրա մէջ, Որը օր ու գիշեր հոգով ցաւում է նրա համար... Ահա մի տարուց աւել է որ ժամանակին գուշակված սարսեցնող կարիքի ուրուականը սաւառնում է անդին տարածութեան վրա... Ուրեմն աւելի թանգագին և սրտառուչ է այն գիտակցութիւնը, որ գահի բարձրութիւնից սերառատ աչքը անքոյթ դիտում է այդ անդին տարածութիւնը, և Թագաւորը աւելի կարեկից է այս տարվայ սովի տանջանքներին, քան որ և իցէ մի ուրիշը:

Վլադիկավկազի «Казбекъ» լրագիրը նոյն առիթով ասում է.

Հեռագրի այս կարճ հաղորդագրութիւնը շատ վշտալի խորհրդածութիւնների նիւթ է տալիս: Կարիքը, աշկարա է, չափազանց մեծ է, որ հարկաւոր եղաւ այդ միջոցին դիմել: Անկասկած, այն սրտաճմլիկ պատկերները, որ նկարում են թղթակիցները և զանազան անձինք, որոնք անձնուիրաբար աշխատում են անքերբրիութիւնից վնասված նահանգներում, բոլորովին չեն չափազանցրած: Մեզ նոյն իսկ թւում է թէ այն պատկերները չեն ներկայացնում նոյն իսկ հարիւրերորդ մասը այն ամենի, ինչ կայ իրապէս: Ցիշենք թէ ինչ ճնշում էր գործադրվում մեր հասարակութեան յայտնի խաւերի կողմից թշուառութեան սկզբում ամեն մի փորձի դէմ, որ կամենում էր պարզել իրերի իսկական դրութիւնը: Ցիշենք ինչպէս այս ճնշումը սիստեմաբար գործադրվում էր մինչև այն ժամանակ, երբ հրդեհը չափազանց ահաւոր չափերի հասաւ և երբ այլ ևս ոչ մի հնարաւորութիւն չը կար նրան ծածկելու: Ցիշենք թէ մինչև այժմ ինչ ձևով է կռիւ մղվում սարսափելի թշուառութեան դէմ. կարիքի իսկական չափերը չեն պարզված, բացակայում են անկանխակալ, դրական և լիակատար տեղեկութիւններ այն սարսափների մասին, որոնցով այժմ լցված է կեանքը դժբախտ նահանգներում: Ակնյայտ է որ կարիքը չափազանց մեծ է, եթէ բացի հասարակական օգնութիւնից պահանջվեց օգնութիւն և Գահի կողմից: Կարիքը չափազանց մեծ է, ուստի պահանջվում է անյապաղ, եռանդոտ և լայնածաւալ օգնութիւն:

*

Արևմտեան Եւրոպան, ինչպէս յայտնի է, վաղուց շատ մութ հասկացողութիւններ ունի Ռուսաստանի մասին: Դեռ ներկայ դարի սկզբում լուսաւորված աշխարհը հաւատում էր այն յիմար անեկդոտներին, թէ Ռուսաստանում ճարպի մոմեր են ուտում կամ կաղակները մարդու խորոված մսով են կերակրվում: Այժմ դարի վերջն է և արևմտեան աշխարհը, ի հարկէ, այլ ևս չէ հաւատում այդ տեսակ առասպելներին: Բայց դա դեռ չէ նշանակում թէ եւրոպացիները այժմ էլ, երկաթուղիների, շոգենաւերի, հեռագիրների տիրապետութեան ժամանակ, աւելի կանոնաւոր, իրական, ճիշդ հասկացողութիւններ ունեն Ռուսաստանի մասին: Տգիտութեան մի այդպիսի նմուշ բերում է «Новости» լրագրի Լոնդոնի թղթակիցը:

Երկու օր առաջ—ասում է նա—ես առիթ ունեցայ շատ հետաքրքրական բաներ իմանալու ռուսաց գրականութեան մասին, որից, ինչպէս երևում է, ես շատ եմ յետ մնացել: Բանից դուրս է գալիս, որ Պուշկինը պատրաստվում է տօնել իր գրական գործունէութեան 25 ամեայ յօբելեանը, որ Դոստոեվսկի և Չեխով գլուխ են կանգնել մի նոր դպրոցի, որը կարելի է անուանել «Երիտասարդ Ռուսաստան»: Իմացայ նոյնպէս, որ հռչակաւոր «վիպագրող» Բէլինսկի արդէն մեռաւ, բայց նա, Լերմոնտով և Բարատինսկի կարող են համարվել ներկայ գրական շարժման նախահայրեր: Իսկ այդ շարժումը շատ նշանաւոր է և նրա մասին Եւրոպայում դեռ ոչինչ չը գիտեն:

Այս բոլոր իսկապէս զարմանալի մտորութիւնները թղթակիցը իմացել է մի դասախօսութիւնից, որ կարդացել է Լոնդոնի կանանց ինստիտուտում Պետերբուրգից նոր վերադարձած անգլիուհի Սպլատտ: Եւ, ի հարկէ, վրդովվելով դասախօս կնոջ հրապարակական ստախօսութիւններից, թղթակիցը մի շարք կծու հեգնութիւններ է անում: Իրաւունք ունի: Բայց մեզ թւում է, որ անգլիուհու այդ օրինակը այնքան էլ վայրենի, եզական չէ: Երբ ռուսերէն լեզուը չը հասկացող, Ռուսաստանում քիչ ապրած և քիչ մարդ տեսած մի կին Անգլիայում այդքան անեկդոտական դասախօսութիւն է կարդում, դա դեռ ներելի է. Անգլիան հեռու է Ռուսաստանից, ուրիշ տեսակ մթնոլորտ ունի, վերջապէս անգլիացին խոր ու երկարատև ուսումնասիրութեան հնարաւորութիւնը չունի: Հարց է. մեզ մօտ, Ռուսաստանում, շատ պարզ և դրական հասկացողութիւններ կան՝ չենք ասում Անգլիայի, այլ նոյն-իսկ Ռուսաստանի մասին: Տասնեակ տարիներով զանազան ժողովուրդներ ապրում են մի և նոյն հողի վրա, մի և նոյն իշխանութեան անդամներին ժողովի է հրաւիրում. հետևանքի մասին ոչ մի արձանագրութիւն չը կայ: Բայց, ինչպէս երևում է, Պարզեանց ստիպված է լինում մենակ գործել. կոչ է անում պարսկահայերին և մասնաւոր նամակներով դիմում է զանազան տեղերի հարուստներին: Սուքիաս արքեպիսկոպոսն էլ աջողութիւն չէ ունենում, գործը մնում է իր նախկին դրութեան մէջ: Պէտք է աւելացնել, որ մի անհասկանալի պատճառով առաջնորդը կենտրոնական ուսումնարանի ծաւալը սեղմել, նեղացրել էր. նա ուզում էր, որ այդ ուսումնարանը լինի թեմական դպրոց Ատրպատականի համար:

Գնում է Սուքիաս արքեպիսկոպոսը, գալիս է Սարաջեան վարդապետը: Սարաջեան ևս զբաղվում է այդ խնդրով, բայց նոյնպէս աջողութիւն չէ ունենում: Մենք իզուր փնտռեցիք ձեր թղթակցի ասած ծրագիրը: Թղթերի մէջ մինչև իսկ մի որ և է յիշատակութիւն չը կայ: Դժուար թէ արխիվի փոշին այնքան թանձր լինէր, որ մենք չը կարողանայինք նկատել: Եւ զարմանալու բան չը կայ, որ փոշու տակ մնայ չեղած բան. բայց պէտք է զարմանալ, որ փոշու տակից հանվում է չեղած բան: Թաւրիզի կանանց հատեստ ընկերութիւնը դժուար թէ արխիվի փոշիներից խնդիրներ հանելու յաւակնութիւն ունենայ: Ինչու պահանջել այդ ընկերութեան թէ ոյժերից և թէ ձեռնհասութիւնից վեր բան, կամ ինչու Նրան վերագրել գործ, որ իրանը չէ:

Կենտրոնական ուսումնարանի հարցին նորից կեանք տուողը, արխիվի փոշուց հանողը եղել է ներկայ թեմական առաջնորդ Սահակ եպիսկոպոս Ս.յվատեան՝ մասնակցութեամբ երկու պարոնների: Առաջնորդարանում տեղի է ունեցել և մի մասնաւոր ժողով մտքերի փոխանակութեան համար: Հէնց այդ ժամանակամիջոցում լոյս տեսաւ «Մշակում» մի առաջնորդող յօդուած, որ առաջարկում էր Թաւրիզի Հայուհեաց ընկերութեանը՝ կենտրոնական ուսումնարանի բացման նախաձեռնութիւնը իր վրա առնել: Ընկերութիւնը այնքան զբաղված էր գաղթականներին խնամելու գործով (մի բան, որի մէջ, ի պատիւ իրան պիտի ասել, եռանդով էր աշխատում), իսկի ժամանակ չունեցաւ դրանով զբաղվելու, մինչև որ ընկերութեան հիմնադիրներից և հանգանակութեամբ նրան մեծապէս նպաստողներից մէկը՝ պ. Բ. Մ.—Ս. առաջարկեց ընկերութեան հաղար թուման տալ դպրոցի բացման համար: Ընկերութեան վարչութիւնը համաձայնութիւն տուեց, միայն ինքն իր կամքով չէր կարող վարվել, ընդհանուր ժողովի հաւանութիւնը պիտի ստանար: Վարչութեան այդ քայլը իր բարեկամների կողմից կարող էր հանդիպել միայն հաւակրանքի ու խրախուսանքի: Ինչպէս առաջնորդը, այնպէս էլ շատ ուրիշները կենտրոնական ուսումնարանի խնդրով զբաղվողներից ձեռնթափ սպասում էին ժողովի վճռին, ցանկանալով որ այդպիսի մի գործի նախաձեռնութիւնը պատկանէ կանանց ընկերութեան: Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ և առանց առարկութեան իր հաւանութիւնը տուեց:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

(Նամակներ Թաւրիզից)

I

Կենտրոնական ուսումնարանը

Կենտրոնական ուսումնարանի խնդիրը, որ այսօր կրկին ասպարէզի վրա է դրված՝ նոր չէ: Պարսկահայերի մէջ շատ վաղուց է այդպիսի մի ուսումնարանի պահանջ զգացվել և մասնաւոր շրջաններում խօսակցութեան նիւթ դարձել: Հարցը լուրջ բնաւորութիւն առաւ առաջին անգամ, որքան մեզ յայտնի է՝ 1893 թուականին: Մի մասնաւոր յանձնախումբ, բաղկացած զանազան դասակարգի մարդկանցից, թւով 15 հոգի՝ սկսեց հարցը ուսումնասիրել լրջօրէն և 7 նիստ ունեցաւ, որոնց արձանագրութիւնները այժմ գտնվում են առաջնորդարանում: Եւ քանի որ խնդիրը վերաբերում է պարսկահայերին՝ պարզ է որ մասնաւոր յանձնաժողովը ոչ մի իրաւունք չունէր առանց ժողովրդի հաւանութեան ուղղակի միջամտել գործին: Յանձնախումբը եթէ ուզենար իր սեփական միջոցներով հիմնել մի մասնաւոր հիմնարկութիւն՝ ի հարկէ նա ազատ էր տալ նրան ինչ բնաւորութիւն ինքը կուզենար. բայց կենտրոնական ուսումնարանը ոչ ոքի սեփականութիւն չէ և ոչ ոք էլ, բացի պարսկահայ ժողովրդից, չէ կարող լինել նրա ոչ ղեկավարը և ոչ էլ կառավարիչը: Հարցը պարզ ու որոշ է: Հէնց այս հիման վրա էլ մասնաւոր յանձնախումբը խնդրին հասարակական բնաւորութիւն տուեց՝ իր ուսումնասիրութիւնը ենթարկելով Թաւրիզի հայ հասարակութեան հաւանութեան, որը և իր հերթին պիտի դիմէր պարսկահայերին:

Նոյն թուականի մայիսի 30-ին յանձնախումբը Թաւրիզում հասարակական ժողով կազմեց՝ յանձնելով նրան իր զբաղմունքի հետևանքը, և առաջարկեց ընտրել ժողովրդական քուէով մի յանձնախումբ՝ գործին հասարակական ու պաշտօնական բնաւորութիւն տալու համար: Տեղի ունեցաւ երկրորդ ժողով յունիսի 6-ին, ուր և ընտրվում է պաշտօնական յանձնախումբը: Ժողովուրդը իր պարտքը կատարած համարելով յետ քաշվեց՝ ասպարէզը թողնելով իր ընտրած յանձնախմբին: Տարաբախտաբար, ընտրվածները իրանց վրա դրված յոյսը չարդարացրին: Մի քանի ժողովներից յետոյ դադարեցին գործելուց: Ինչպէս երևում է արձանագրութիւններից՝ պատճառը յանձնախմբի անդամների մեծամասնութեան անտարբերութիւնն էր: Փոքրամասնութիւնն էլ, փոխանակ նորից դիմելու ժողովրդին՝ իրերի դրութեան հետ ծանօթացնելու և նոր ընտրութիւն խնդրելու, յոյսը դնելով եկող թեմական առաջնորդի վրա՝ անգործունէութեան է մատնվում:

Գալիս է թեմական առաջնորդ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեան: Գործը սկսելու համար յանձնախմբի անդամներին ժողովի է հրաւիրում. հետևանքի մասին ոչ մի արձանագրութիւն չը կայ: Բայց, ինչպէս երևում է, Պարզեանց ստիպված է լինում մենակ գործել. կոչ է անում պարսկահայերին և մասնաւոր նամակներով դիմում է զանազան տեղերի հարուստներին: Սուքիաս արքեպիսկոպոսն էլ աջողութիւն չէ ունենում, գործը մնում է իր նախկին դրութեան մէջ: Պէտք է աւելացնել, որ մի անհասկանալի պատճառով առաջնորդը կենտրոնական ուսումնարանի ծաւալը սեղմել, նեղացրել էր. նա ուզում էր, որ այդ ուսումնարանը լինի թեմական դպրոց Ատրպատականի համար:

Գնում է Սուքիաս արքեպիսկոպոսը, գալիս է Սարաջեան վարդապետը: Սարաջեան ևս զբաղվում է այդ խնդրով, բայց նոյնպէս աջողութիւն չէ ունենում: Մենք իզուր փնտռեցիք ձեր թղթակցի ասած ծրագիրը: Թղթերի մէջ մինչև իսկ մի որ և է յիշատակութիւն չը կայ: Դժուար թէ արխիվի փոշին այնքան թանձր լինէր, որ մենք չը կարողանայինք նկատել: Եւ զարմանալու բան չը կայ, որ փոշու տակ մնայ չեղած բան. բայց պէտք է զարմանալ, որ փոշու տակից հանվում է չեղած բան: Թաւրիզի կանանց հատեստ ընկերութիւնը դժուար թէ արխիվի փոշիներից խնդիրներ հանելու յաւակնութիւն ունենայ: Ինչու պահանջել այդ ընկերութեան թէ ոյժերից և թէ ձեռնհասութիւնից վեր բան, կամ ինչու Նրան վերագրել գործ, որ իրանը չէ:

Կենտրոնական ուսումնարանի հարցին նորից կեանք տուողը, արխիվի փոշուց հանողը եղել է ներկայ թեմական առաջնորդ Սահակ եպիսկոպոս Ս.յվատեան՝ մասնակցութեամբ երկու պարոնների: Առաջնորդարանում տեղի է ունեցել և մի մասնաւոր ժողով մտքերի փոխանակութեան համար: Հէնց այդ ժամանակամիջոցում լոյս տեսաւ «Մշակում» մի առաջնորդող յօդուած, որ առաջարկում էր Թաւրիզի Հայուհեաց ընկերութեանը՝ կենտրոնական ուսումնարանի բացման նախաձեռնութիւնը իր վրա առնել: Ընկերութիւնը այնքան զբաղված էր գաղթականներին խնամելու գործով (մի բան, որի մէջ, ի պատիւ իրան պիտի ասել, եռանդով էր աշխատում), իսկի ժամանակ չունեցաւ դրանով զբաղվելու, մինչև որ ընկերութեան հիմնադիրներից և հանգանակութեամբ նրան մեծապէս նպաստողներից մէկը՝ պ. Բ. Մ.—Ս. առաջարկեց ընկերութեան հաղար թուման տալ դպրոցի բացման համար: Ընկերութեան վարչութիւնը համաձայնութիւն տուեց, միայն ինքն իր կամքով չէր կարող վարվել, ընդհանուր ժողովի հաւանութիւնը պիտի ստանար: Վարչութեան այդ քայլը իր բարեկամների կողմից կարող էր հանդիպել միայն հաւակրանքի ու խրախուսանքի: Ինչպէս առաջնորդը, այնպէս էլ շատ ուրիշները կենտրոնական ուսումնարանի խնդրով զբաղվողներից ձեռնթափ սպասում էին ժողովի վճռին, ցանկանալով որ այդպիսի մի գործի նախաձեռնութիւնը պատկանէ կանանց ընկերութեան: Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ և առանց առարկութեան իր հաւանութիւնը տուեց:

նութեան, մի և նոյն օրէնքների տակ, հասկանում են պետական լեզուն, բայց այդ հարևանները, կողքէ-կողք ապրողները ճանաչում են իրար։—Ոչ։ Վերցնենք Ռուսաստանի ամենախոշոր կենտրոնը, Պետերբուրգը, որ ամբողջ պետութեան սիրտն է. կարող են այնտեղ գործող հրապարակախօսները, գիտնականները և հասարակական այլ գործիչները ձեռքը սրտին դրած վկայել թէ միանգամայն լաւ ճանաչում են պետութեան այնպիսի մասերը, ինչպէս, օրինակ, Կովկասն է, որ մայրաքաղաքից 5—6 օրվայ ճանապարհ հեռու է։ Հաւատացած ենք որ նոյն-իսկ ամենօրեայ մեծ լրագիրների խմբագրութիւնները այնքան տեղեկութիւն ունեն մեր երկրի մասին, որքան դասախօս անգլիուհին ռուսաց գրականութեան մասին ունի։ Եւ հէնց այդ անգիտութեան պատճառով չէ՞ որ զանազան մութ ֆեերիստներ կարողանում են հրապարակ հանել ամեն տեսակ հրէշաւոր առասպելներ զանազան գրքերի, յօդուածների միջոցով՝ և ռուսաց մեծաւոր կենտրոնի անպատրաստութիւնը այնքան մեծ է, որ այնտեղ նոյն-իսկ հաւատ են ընծայում ֆեերիստների բարբաջանքներին, մի հանգամանք, որ հաղարապատիկ վիրաւորական է, քան այն բոլոր լրբութիւնները, որոնք լոյս են ընծայվում իբրև տեղեակ և երկրի գրութիւնը լաւ ըմբռնած մարդկանց վկայութիւններ։ Զարմանում էք անգլիուհի Սպլատի վրա, որ կարծում է թէ Պուշկինը դեռ կենդանի է։ Մի զարմացէք։ Աւելի զարմանալին կայ. և դա այն է, որ դուք նոյն-իսկ ձեր տանը ապրողների լաւն ու վատը չէք ճանաչում...

*

«Փողովուրդը լրագիր կարդալու է, թէ գիրք» —հարցնում է Կ. Պոլսի «Բիւրակն» շաբաթաթերթը։ Մի հարց, որ որքան անտեղի է, այնքան էլ պարզ է։ Լրագիրը ուրիշ կոչում ունի, գիրքը—ուրիշ, երկուսը միմեանց լրացնում են, երկուսը միմեանց գոյութիւնը անհրաժեշտ են դարձնում, ապա ուրեմն երկուսն էլ պէտք է կարդալ։ Ինչպէս հացը չէ կարող փոխարինել ջրին և ընդհակառակն, այնպէս էլ լրագրի և գրքի գործառնութիւնները չեն կարող միմեանց փոխարինել։ Եւ սակայն պօլսեցի գրողը ասում է.

Լրագիրները հասորներէ աւելի ընթերցողներ ունին, հասորը՝ գրական կամ գիտական որ սեռերուն ալ պատկանի, միտքի ազնուապետական դասը միայն կը կարդայ, թող որ ամէն հասոր չի կրնար կարդացուիլ, որովհետև մարդուն կեանքը չի բաւեր. եթէ ուզենք կարդալ աշխարհի բոլոր գիրքերը, նոյն իսկ դժուարին է սպառել դարու մը բոլոր հեղինակները։

Այստեղից եզրակացութիւն. «Լրագիրը թէ գիրքը—ես իմ քուէս լրագրին կուտամ»։ Բայց դա մի թեթևսօլիկ քուէ է։ Գիրքը ոչնչացնել լրագրի համար—մեծ յանցանք է. լրագիրը չէ կարող կատարել այն, ինչ կատարում է գիրքը. լրագիրը առօրեայ կեանքն է, գիրքը կրթում է ընթերցողին, տալիս է Նրան պաշար քննելու, դատելու, կեանքի ընթացքը, անցեալը, ապագան հասկանալու համար։ Ի՞նչ կը լինէր, եթէ գիրքը, այդ մնայուն-հաստատամիտ ընկերը, չը ծանրանար ձեր սեղանի վրա, այլ ցրված լինէր լրագրական թերթերի այն անգին կոյտերի մէջ, որոնք լոյս են տեսնում ամեն օր և մի քանի բօպէների ծառայութիւն կատարելուց յետոյ անհետանում են, մինչև որ/միւս օրը նոր կոյտեր լոյս կը գան։ Ճիշդ է, որ լրագիրը շատ է տարածվում, շատ հետաքրքրութիւն է պատճառում։ Բայց դա լրագրի կեանքն է, նրա բնաւորութիւնը. մինչդեռ գրքի կեանքը ուրիշ է—դանդաղ տարածվել, բայց երկար կարդացվել։ Այդ դանդաղկոտութիւնը ճակատագրական չէ բոլոր գրքերի համար։ Կան մի՛ր ու եռանդուն, բայց մանաւանդ շատ սիրուն գրքեր, որոնք ժողովրդի մէջ լրագրից էլ մեծ շրջանառութիւն են գործում։ Ուրիշ բան է, եթէ չէք կարողանում այդպիսի ժողովրդական գրքեր լոյս հանել։ Ո՛չ, թողէք որ լրագիրն ու գիրքը միասին գնան. նրանք միմեանց շատ և շատ են հարկաւոր։

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Ապրիլի 13-ին

Մարտի սկզբից մինչև օրս ոչ մի կաթիլ անձրև չէ եկել այս դաւառի արտերի վրա։ Ցմեռը սակաւաձիւն, գարունը չորային, այնպէս որ աշնանավար ցանքսերը դեռ հասակ չը քաշած՝ ենթարկվեցին երկարատև երաշտի, որ խիստ անբնական ու չը տեսնված երևոյթ է տեղիս համար։ Եթէ այսպէս տևէ մի 10—15 օր, ամեն բան վերջացած կորած է։

Վատնդի ահը դրդել է տգէտ ու անհաւատ ամբոխին հին ծէսերին դիմելու, որպէս զի երկինքը գթայ, անձրև ուղարկի։ Հայ գիւղերից մարդիկ են ուղարկվում Գանձակ, Մռաւի սարից, որ այստեղ յայտնի է «Մոսէսայ սար» անունով—քար բերելու, որ այդ քարը գցեն դետի ջրի մէջ և անձրև գայ։ Կամ «հարաքեաթից» ընկած խեղճ պառաւներին են ուղարկում դաշտ, երեսները «քարին քսելու», որ անգութ երկինքը խղճայ...

Ուշադրութեան արժանի է թուրքերի և լեզգիների արածը։ Ահագին խմբերով—կին, մարդ, տղայ, աղջիկ, մեծ ու փոքր թափվել են դաշտը և յուսահատ աղաղակներով ու աղիողորմ վայնասունով երկնքի ողորմութիւնն են հայցում։ Մէկը կուրծքն է ծեծում ու զիլ հառաչում, միւսը գլխին է խփում, թելերը տարածում, մազերը փետում, երրորդը հողերի մէջ թաւալ թաւալ է անում, չորրորդը ծծի երեխան է դէպի երկինք մեկնում՝ լալիս և այդպէս անվերջ մի տխուր, ծանր պատկեր... Զարմանալի է դրանց հաւատը։ Այդ ձևերով ողորմութիւն խնդրող թուրքը կամ լեզգին, շատ հանգիստ խղճով միւս աշխարհն է ուղարկում ճանապարհին պատահած մի անմեղ անցորդ հայի՝ նրա քստոտ ձին կամ հնչին բեռը սեփականելու համար, և դեռ խորին հաւատով հաւատում է, որ Աստուած հասցրեց իրան այդ որսը և «Ալլահ քեարիմ դըր, գենա եթրդի» ասելով՝ գնում է իր որսը վայելելու։ Իսկ այսօր այդպիսի հակումներով և համոզմունքով զարգացած թուրքը կամ լեզգին, նոյն հայերի համար անձրև է խնդրում երկնքից։ Նրանք շատ էլ չեն սիրում հողի մշակութեան ծանր աշխատանքը և իրանց յոյսը հայերն են։ Աստուած մի արասցէ, որ հայի արտերն էլ վատ բերը տան, էլ ո՞ւմ դուռը դիմէ թուրքը՝ հաց, կորեկ առնելու։

Դաւառիս սակաւաթիւ հայ գիւղերից որն ուզում էք մտէք ձմեռը, լիքը թուրք ու լեզգի են, որոնք քստոտ ձիերով սև զգզվված չորերով (բայց արծաթապատ խէնչարներով անշուշտ) եկել են իրանց «զօնաղ» հայից կորեկ, դարի կամ ցորեն պարտք առնելու, յետոյ վճարելու խոստումով։ Որքան էլ տարին առատ լինի, էլի նրանց հացը պակաս կը լինի։ Այդ նիւթական պակասութիւնը չէ՞ որ պատճառ է դառնում թուրքերի ու լեզգիների համար՝ լցնել Նուխու ահագին բանտը։ Նահանգական դատարանի քրէական բաժնի սեսիան տարին 3—4 անգամ Գանձակից Նուխի է գալիս։

Մի երկու օր նստեցէք այդ դատավարութեան դահլիճում և տեսէք թէ ինչ քստմնելի տգաւորութիւն է թողնում ձեզ վրա այդ անմիտ սպանութիւնների ահագին թիւը։ Սաբաթլու գիւղում Իւզբաչեան հայ եղբայրներից երկու ոչխար գողանալու համար, դրա առիթով, երկու կողմից սպանվում են 4 մարդ, մէկն էլ վիրաւորվում է։ Պէտք է խոստովանած, որ այդ յաճախակի սպանութիւններին մեծապէս նպաստում են և մտիկ պօլիցիական ստորին պաշտօնեաները իրանց իմացած ձևը տալով գործին և մեղաւորներին ազատել աշխատելով։ Խ.

ՆԱՄԱԿ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ

—

Ապրիլի 16-ին

Վեց ամիս է շարունակ մեր հասարակութիւնը ընտրողական պայքարի մէջ է գտնվում։ Անցեալ տարվայ մի քանի ժողովներից յետոյ կատարված տանուտէրական ընտրութիւնը բեկանված է և ընտրվածները իրանց թեկնածուներով զրկված են ընտրվելու իրաւունքից։ Տանուտէրական ընտրութիւնից յետոյ տեղի ունեցած գիւղական դատաւորների առաջին ընտրութիւնը նոյնպէս բեկանվեց, իսկ երկրորդ ընտրութեան ժամանակ անկարելի եղաւ դատաւորների ամբողջ կազմի ընտրութիւնը և մինչև այսօր էլ հին դատաւորներից մէկն է շարունակում իր պաշտօնը նոր ընտրված, բայց չը հաստատված և բոլորովին հեռացված դատաւորի տեղ։

Այս գարնանը կատարվեց ջրբաժանի (водный староста) ընտրութիւնը, բայց կրկին բեկանվեց, որից յետոյ այսօր նշանակված էր նոր ընտրութիւն, որը և կատարվել է՝ մասամբ աջող և մասամբ անաջող. տեսնենք կը հաստատվի, թէ այս անգամ էլ կը բեկանվի։ Անցեալ ուրբաթ օրը նշանակված էր տանուտէրական ընտրութիւն, սակայն ընտրութիւն չը կայացաւ ժամանակի անյարմարութեան պատճառով։

Թէև տանուտէրական ընտրութիւնը այս ձևով ձգձգվում է, բայց այս անգամ ընտրութիւն չը կայանալը մեծամասնութեան ցանկութիւնն էր (մօտ 1000 տուն գիւղացիներից ներկայ էին միայն 200 ձայներ), որովհետև հին և հասարակութեան ծանօթ անձինք հեռացրված են պաշտօնից և զրկված են ընտրվելու իրաւունքից, որոնց տեղը այսօր բռնում են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք հասարակական ոչ մի գործի մէջ դեռ չեն եղել և որոնց հասարակութիւնը չէ ճանաչում. այս տեսակէտից ընտրութիւն չը կայանալը աջողութիւն պէտք է համարել, որովհետև հասարակութիւնը ժամանակ կունենայ աւելի լրջօրէն քննելու քուէարկվող նոր թեկնածուների որպիսութիւնը և ըստ այնմ ընտրութեան ժամանակ ձայն կը տայ ոչ թէ ստիպված, այլ համոզված։

Ամենահաւանական ընտրելին, որին ցանկանում է ամբողջ հասարակութիւնը և որի դէմ ոչ մի կուսակցութիւն գոյութիւն չունի, Օհանջանեանցն է միայն, բայց որովհետև սրան չեն թոյլ տալիս քուէարկվել որպէս ազնուականի, ուստի հաւանական ընտրելին պէտք է համարել Գ. Սլկունուն, որին միայն Վաղարշապատի հասարակութիւնն է ճանաչում որպէս կրթված և գործունեայ երիտասարդի, և որը, առանց միւսների պէս «զլուխ ջարդելու» և «ձայներ որսալու», համաձայնվում է լինել տանուտէր, եթէ կընտրվի և կը հաստատվի այդ պաշտօնի մէջ։ Ձայն կայ և Ս. Փոթէեանի մասին, սակայն սրա ընտրութիւնը ապահովված կարելի էր համարել, եթէ անցեալ ուրբաթ օրվայ ժողովը կայանար. այժմ, երբ մայիսի 2-ին նոր ընտրութիւն է նշանակված և ուրեմն միջոց է տրված ընտրողներին աւելի լաւ քննել թեկնածուներին, դժուար թէ աջողվի Փոթէեանի ընտրութիւնը։

Ցանկալի է, որ մեր հասարակութիւնը, առանց զանազան ազդեցիկ մարդկանց հետևելու, առանց սրա ու նրա խաթրը չանելու, հետևի միայն իր համոզմունքին և ընտրի իր համար մի արժանաւոր և կրթված տանուտէր, մի ազնիւ և չիտակ անձնաւորութիւն, որը կարողանայ գդալ և տեսնել հասարակութեան պահանջը և օգտակար լինել նրան։ Գ.

ՆԱՄԱԿ ԶԻԲՐԱՑԵԼԻ ԳԱՒԱՌԻՑ

—

Հաղրութ գիւղ, ապրիլի 22-ին

Մինչդեռ Զիշմանլու գիւղի մօտ տեղի ունեցած կռւից ազատված ալիանլուեցի աւազակների մնացորդները, բոլորովին սարսափած ու յուսահատված, թափառում էին լեռներում ու անտառներում իրանց անձը վտանգից ազատ պահելու համար, Մանասը իր ընկերներով հետևում էր Նրանց և հանդիպեց Հաղարի գետից քիչ հեռաւորութեան վրա գտնվող անտառում։ Փոքրիկ խումբը սկսեց հրացանաձգութիւն, և աւազակները, զդալով իրանց գլխին գալիք պատուհասը, հայերի կրակին պատասխանելով՝ խոյս էին տալիս ու աշխատում, որ մի կերպով հասնեն Հաքարի գետի ափի մօտ բնակվող թափառաշրջիկ թուրքերի վրաններին, լաւ իմանալով՝ որ իրանց ազատման միակ միջոցը այդ կարող է հանդիսանալ։ Աւազակներին աջողվում է այս միջոցը։

Մանասը պաշարում է վրանները և մարդ է

Մինչդեռ ընկերութեան բարեկամները սպասում էին վարչութեան պաշտօնական գրութեան, որով նա առաջնորդին պէտք է յայտարարէր՝ որն իբրև նախաձեռնող՝ կենտրոնական ուսումնարանի սկզբնական ծախսի համար տալիս է հազար թուման, յանկարծ լսվում է, որ վարչութիւնը պայման է առաջարկում։ Առաջին նուագում ընկերութեան վարչութիւնը (խօսքս միշտ Թաւրիզի կանանց ընկերութեան մասին է և ոչ Ատրպատականի), իբրև պայման առաջարկում է՝ մի ձայն ունենալ կենտրոնական ուսումնարանի գործերում։ Բարեկամները աշխատում են համոզել յարգելի տիկիններին, որ այդ պահանջը թէ ապօրինի է և թէ ոչ պատուաբեր։ Նախ՝ որ ուսումնարանը, պատկանելով ամբողջ պարսկահայերին, ոչ ոք այնտեղ ձայն ունենալ չէ կարող—ոչ միայն հազար թուման տուող յարգելի վարչութիւնը, այլ հարիւր հազարներ տուողն անգամ, բացի միայն ժողովրդից, որի կամքը կարտայայտվի իր ընտրեալների միջոցով։ Երկրորդ՝ որ դրանով մեր կեանքի մէջ կը մտնի մի անհամակրելի, մի անբարոյական սկզբունք—դրամով ձայն գնել։ Եւ եթէ ընկերութեան այդ պայմանը ընդունվէր, ոչ ոք այլ ևս իրաւունք չէր ունենայ մերժելու ուրիշներին ևս. այնպէս որ երկու հազար տուողը կունենար 2 ձայն, չորս հազար տուողը—4 և այլն։ Ո՞վ կը լինէր ուսումնարանի պատասխանատու տէրը.—դրամ տուողները։ Ցեռոյ... Ընկերութեան բարեկամները միջամտեցին՝ ցոյց տալով այդ քայլի աղետալի հետևանքը։ Համոզվեցին, որ նա բաւականանայ միայն նախաձեռնութեան մեծ պատուով, որ ընկերութեան համար մի բարոյական յաղթանակ էր և փառաւոր վկայական իր գործունէութեան։ Վարչութեան յարգելի անդամուհիները համաձայնվեցին։ Բայց որքան մեծ եղաւ զարմանքը, երբ երկու օրից յետոյ վարչութիւնը գրում է առաջնորդին, թէ ընկերութիւնը տալիս է հազար թուման և ինքը կը լինի ուսումնարանի ղեկավարը։

Վարչութեան այս անտակտ պահանջը ապշութիւն պատճառեց։ Ախր չէ՞ որ վարչութեան անդամուհիներին շատ շատ լաւ յայտնի էր, որ ուսումնարանը պարսկահայերի սեփականութիւնը պիտի լինէր, ուրեմն ինչպէս նա կարող էր ղեկավարը լինել, դեռ մի կողմը թողնենք, որ այդ թէ իրանց ոյժերից և թէ ձեռնհասութիւնից շատ բարձր է։ Բացի սրանից, ընկերութիւնը դեռ շատ անհրաժեշտ և խիստ կարևոր անելիք ունի, որ կենտրոնական ուսումնարանից պակաս գործ չէ. այդ մասին մի քիչ յետոյ կը խօսենք։ Այլատեան եպիսկոպոսին մնում էր մերժել և նա մերժեց։ Ուրիշ կերպ վարվել սրբազանը չէր կարող և իրաւունք էլ չունէր. այլապէս ամբողջ ժողովուրդը կը բողոքէր։ Ախր ո՞վ իրաւունք ունի ժողովրդի ձեռքից խլել իր սեփականութիւնը։ Ուրիշ բան է, եթէ ընկերութիւնը ուզենար իր միջոցներով մի մասնաւոր ուսումնարան բանալ. այս դէպքում ոչ ոք իրաւունք չունի բան ասելու։ Երբ հարցը դեռ այսպիսի անորոշ դրութեան մէջ է, երբ ոչ մի դրական քայլ չէ արված, մենք չը գիտենք ո՞րտեղից առաջացաւ այն ոգևորութիւնը, որի մասին խօսում է ձեր թղթակիցը։ Արդեօք մասնաւորը կամ անհատականը չէ խառնում հասարականին։ Այս ինձ աւելի հաւանական է թվում, որովհետև այդպիսի ընդհանրական ոգևորութիւն չը կայ։ Դուք գիտէք, որ կան անհատներ, որոնք առհասարակ չրջապատի տրամադրութիւնը իրանցով են չափում.—երբ անհատն ինքը ուրախ է, նրան թվում է թէ ամենքն էլ ուրախ են։ Հոգեբանական տեսակէտից երևոյթը հետաքրքիր է, բայց մեր խօսքը այս մասին չէ։ Միայն մեզ թոյլ ենք տալիս նկատել, որ թղթակիցները պէտք է զգոյշ լինեն և չը խառնեն անհատական տրամադրութիւնը հասարակականի հետ... Սրանից ոչ-ցանկալի թիւրիմացութիւն և ենթադրութիւններ կարող են առաջ գալ. մասսայի և անհատի հոգեբանութիւնը տարբեր է։

Մենք ասացինք, որ կանանց ընկերութիւնը անհրաժեշտ, անյետաձգելի անելիք ունի, և առաջին տեղը բռնում է օրիորդաց կանոնաւոր միջնակարգ մի ուսումնարանը։ Պարսկաստանում իգական սեռի կրթութիւնը թողնված է անխնամ. ամբողջ Պարսկաստանում մի հատիկ օրինակելի օրիորդաց ուսումնարան չը կայ, ամենքն էլ իրանց ոյժը կենտրոնացրել են տղաների վրա, մինչդեռ կարևորը օրիորդների կրթութիւնն է։ Ամենքն էլ այս խոստովանում են, բայց զարմանալի յամառութեամբ շարունակում են արհամարհել։ Եւ ո՞վ չը գիտէ մեզնից, որ հասարակութիւն կազմող անհատներին, քաղաքացիներին բարոյական կազմ տուողը, համակրելի թէ հակակրելի ոգի ներշնչողը կինն է։ Ո՞վ չը գիտէ, որ նա է «հասարակական քուրան», որ նրա ձեռքումն են հալվում ու ձուլվում, տաշվում ու յղկվում, կերպարանք ստանում հասարակութեան անդամները։ Ո՞վ չը գիտէ, որ ներկայ հասարակական կազմակերպութեան մէջ չատ-չատ բան կախված է մօրից՝ քանի որ մանուկը ծնվելու օրից մինչև հաց աշխատել սկսելը գլխաւորապէս մնում է մօր ազդեցութեան, խնամակալութեան տակ։ «Տուէք մեզ կրթված մայրեր, մենք ձեզ տանք կրթված քաղաքացիներ», ուժ յայտնի չէ այս ասացուածքը։ Քանի որ այս այսպէս է, քանի որ Պարսկաստանումն էլ իգական սեռի կրթութիւնը անխնամ է թողնված կամ արհամարված, հարցնում ենք յարգելի վարչութեան և ընկերութեան անդամուհիներին, աւելի տրամաբանական ու խելացի չէ օգնել Թաւրիզի օրիորդական ուսումնարաններից մէկին—և այդ կարող են անել առանց դժուարութեան՝ երկու կանանց ընկերութիւնները միացած—որ նա լաւ հիմունքների վրա դրվի, իւրաքանչիւր տարի մի-մի դասարան աւելացնելով՝ վերածվի միջնակարգի։ Ինչու՞ համար թողնել այս ամենաանհրաժեշտ գործը, և ձգտել մտնել մի այնպիսի գործի մէջ, որ շատ վեր է թէ ձեր ոյժերից ու ձեռնհասութիւնից, մանաւանդ որ գործը պատկանում է մի երկրի ամբողջ ժողովուրդին։ Դուք իբրև անդամներ այդ երկրի ժողովրդի, կարող էք աջակցել, օգնել նիւթապէս ու բարոյապէս, և հէնց այդպէս էլ խնդրում էին ձեզանից. այս սահմանից անցնելը ձեզ հեռու կը տանի։

(Կը շարունակվի)

ուղարկում Զանգեզուրի գաւառապետին յայտնելու ու օգնութիւն խնդրելու։ Աւազակները, գաւառապետից օգնութիւն խնդրելու մասին ոչինչ տեղեկութիւն չունէին, ուստի իրանց ապապահով զգալով իրանց արիւնակիցների վրաններում, այնքան էլ ուշադրութիւն չէին դարձնում հետամուտ եղող հայերի վրա։ Բայց մի քանի ժամից յետոյ հեռուից նկատելով պրիստաւին ու նրան հետևող կազակներին, աւազակները իսկոյն դուրս թռան վրաններից և փախչել փորձեցին, սակայն փախչելիս երկուսն ընկան Մանասի և Սարգիսջանի գնդակներից, իսկ մնացեալ չորսը պատելով՝ ձերբակալեցին և յանձնեցին պրիստաւին, որը այդ միջոցին տեղ հասաւ։ Հայերից միայն Սարգիսջանը մի թեթև վէրք է ստացել ոտից։ Փոքրիկ խմբակը պ. պրիստաւի գովասանքին արժանանալով՝ ուրախացած վերադարձաւ տուն՝ բարի լուր տալու խեղճ գիւղացիներին։

Վերջապէս այսօր աեսնում ենք Հարաբ և շրջակայ գիւղերի բնակիչներին ազատված դարևոր հարստահարիչների բռնապետութիւնից. այսուհետև գիւղացին կարող է փոքր առ փոքր ապահովել իր մտնեսապէս քայքայված վիճակը, ու աներկիւղ դուրս գալ հանդը և պարապվել իր դաշտային գործերով։

Բ. Տէր-Ստեփանեանց

ՆԱՄԱԿ ԹՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Շուշի, ապրիլի 24-ին

Խնդրեմ հիւրընկալէք այս երկտողը ձեր լրագրի հաւարներից մէկում։

Շուշու գաւառի Քառատնի գիւղացի այրի Մալագ Հասրաթեան իր աղջիկը կնութեան է տալիս Նոյն գիւղացի Սողոմոն Լալայեանին, որ ապրում է Մոսկվայում և պարապում է դերձակութեամբ. այրին իր ամբողջ կարողութիւնը, որի հետ և 1000 բուբլի կանխիկ դրամ, տուել է փեսացուին իբրև օժիտ, և ունի ստացագիր Սողոմոն Լալայեանից և նրա եղբօրից։

Փեսան, աղջկանը տանելով Մոսկվա, 9 ամիս պահելուց յետոյ, արձակել է կնոջը վարակված դրութեան մէջ։ Այժմ խեղճ նորահարսը իր մօր հետ ապրում է Շուշու կուսանաց վանքում, մուրացկանութեամբ, ամենաողորմ դրութեան մէջ։ Քանի անգամ խնդրամատոյց է եղել տեղիս հոգևոր կառավարութեան և հաշտարար դատաւորին, բայց անօգուտ, ուշադրութիւն դարձնող չը կայ։ Իսկ նրանց փեսան և նրա պարոն եղբայրը ոչ փողն են վերադարձնում, ոչ էլ կնոջը ապրելու միջոց են տալիս, այսինքն այն տեսակ մարդկանց կարգին են պատկանում, որոնք լեզուով արդարութեան և ճշմարտութեան պաշտպաններ են, իսկ գործով մի մի այլանդակ հրէշ։

Այս տողերով հրաւիրում եմ բարեմիտ անձանց ուշադրութիւնը թշուառ այրի կնոջ և նրա թշուառ աղջկայ անելանելի դրութեան վրա։

Սողոմոն Սարուխան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի օր սրանից առաջ Քութայիսում ջերմ զգացմունքով և համակրական ցոյցերով ճանապարհ գցեցին գիւղատնտես Ստեփան Խ ո ջ ա յ ե ա ն ին, որը տասնմէկ տարի մնալով այդ քաղաքում՝ եռանդուն կերպով գործել էր գիւղատնտեսական ասպարէզում, և հիմնել է Քութայիսի գիւղատնտեսական դպրոցը։ Խոջայեանին ողջերթ մարթելու համար հաւաքվել էին ոչ միայն անձնական ծանօթներ, այլ և անծանօթներ, որոնք գնահատելով նրա գործունէութիւնը՝ ցանկանում էին յայտնել իրանց համակրութիւնը։ Ս. Խոջայեան տեղափոխվում է Բագու մասնաւոր պաշտօնով։ Ցանկալի է, որ և Բագուում աջողվի նրան գործել գիւղատնտեսութեան ասպարէզում։ Բագուի նահանգի գաւառները՝ օրինակ Ղուբայի, Շամախու և Լենքորանի, նշանաւոր են իրանց գիւղատնտեսական արդիւնքներով և կարիք ունեն մասնագիտական ղեկավարութեան։ Այնտեղ գտնվող գիւղատնտեսները, հաւաքվելով այնպիսի մասնագէտի շուրջը, ինչպէս է Խոջայեան, կարող կը լինէին ընթացք տալ գիւղատնտեսական խնդիրների մշակութեան և աջող լուծման։ Բագու-Պետրովսկի երկաթուղին արդէն բարձրացրել է հողերի գները Ղուբայի գաւառում և շատերը մտադիր են իրանց նուիրել գիւղատնտեսութեան։ Ղուբայում և Բագուի մօտ Մաշտաղա գիւղում հիմնվել են այգեգործական դպրոցներ։ Գիւղատնտեսների հաւախմբվելը, անկասկած, կը յարուցանի երկրագործութեան զարգացման հարցեր և կը նպաստի նրանց մշակութեան։

—

Մեզ հաղորդում են, որ Բագուի հայ թատրոնական խմբի անդամները մտադիր են ցրվել գաւառները և տալ ներկայացումներ։ Նրանց մի մասը, բաղկացած տիկիններ Սիրանոյշից, Զաբէլից և Փառանձեմից, և պ.պ. Պետրոսեանից, Վրոյրից և ուրիշներից՝ այս օրերս ուղևորվում են, մի ամսով, Ալէքսանդրոպոլի և Կարսի կողմերը, որտեղից վերադառնալուց յետոյ կերթան Շուշի՝ ամբողջ ամառն այնտեղ մնալու նպատակով։

—

«Тифл. Листокъ» լրագիրը, պաշտօնական հաղորդագրութիւնից վերցնելով՝ հետևեալ մանրամասնութիւններն է պատմում գեներալ-մայոր Լիսենկոի սպանութեան մասին։ Ապրիլի 15-ին, Ղուբայից Բագու տանող պօստային ճանապարհով գնում էին երկու կառք. մէկի մէջ նստած էին՝ Բագուի կլասիկական գիմնազիայի դիրեկտոր Պօբեդոնոսցեվ և գիմնազիական կօլոնիայի կառավարիչ պաշտօնաթող գեներալ-մայոր Լիսենկո, իսկ միւսում՝ մասնաւոր մարդիկ։ Հէնց որ այն կառքը, որի մէջ էին Լիսենկո և Պօբեդոնոսցեվ, մօտենում է «Խանի» կոչված այգուն, իսկոյն այգիներից երեք հրացան են արձակում, և գնդակներից մէկը դիպչում է գեներալ Լիսենկոին ու վիրաւորում նրան։ Այդ վէրքից Լիսենկո միւս օրը մեռնում է։ Սպանութիւնը, տեղական վարչութեան ասելով, կատարված է ոչ թէ սովորական աւազակների կողմից, այլ թշնամութեամբ, որովհետև աւազակները, վիրաւորելուց յետոյ մինչև անգամ չեն փորձել կողոպտելու ճանապարհորդներին։ Քննութիւնը կատարվում է, բայց յանցաւորները դեռ չեն գտնված։

—

Փետրվարի 28-ին Թիֆլիսի նահանգական դատարանում քննվեց մի գործ, որը դատարանի դահլիճը գրաւել էր արհեստաւորների մեծ բազմութիւն։ Մեղադրվում էին՝ Կոնստանտին Վարդանով, Աննա Ախշարումով, Սարգիս Շախբաթով և Գէորգ Արութիւնով սպանութեան մէջ՝ կողոպտելու նպատակով, բայց վերջին երեք հոգին սպանութեան մէջ անմիջական մասնակցութիւն չունենալով՝ նպաստել էին յանցանքը ծածկելուն և հետքերը ոչնչացնելուն։ Ինչպէս յայտնի է, 1898 թւի նոյեմբերի 12-ին, Աբաս-Աբադեան հրապարակի վրա գտնվեց մի քսակ, որի մէջ դրված էր մի մարդու դիակ։ Դա ոսկերիչ Մարտիրոսովի դիակն էր, որին, կողոպտելու նպատակով, Վարդանով տարել էր իր տունը և սպանել և ապա դիակը քսակի մէջ գցելով՝ դուրս էր բերել և գցել Աբաս-Աբադեան հրապարակի վրա։ Կանչված էին մօտ 20 վկաներ։ Դատարանը, գործը քննելուց յետոյ, հետեւեալ վճիռը կայացրեց. Թիֆլիսի քաղաքացի Վարդանովին զրկել բոլոր իրաւունքներից և դատապարտել տաժանակիր աշխատանքներին 17 տարի և 6 ամիս ժամանակամիջոցով, իսկ Աննա Ախշարումովին, սպանութեան հետքերը ծածկելու համար՝ զրկել բոլոր իրաւունքներից և երեք տարվայ բանտարկութեան ենթարկել։ Սարգիս Շախբաթով և Գէորգ Արութիւնով արդարացրված են։

—

Մեզ հաղորդում են, որ կովկասեան մի քանի ինժենէրներ ներկայումս զբաղված են Կուր գետի վրա նաւագնացութեան գիծը երկարացնելու, որպէս զի կարելի լինի ապրանքներ տեղափոխել Կուրի միջին հոսանքից մինչև Կասպից ծովը։

—

Վերջին տարիները Անդրկովկասում սկսում են տարածվել ելեկտրական շարժիչներ՝ մ օ տ օ ր ն ե ր։ Նրանց ամենամեծ քանակութիւնը գտնվում է Բագուում։ Չը նայելով որ Բագուն ունի այնպիսի առատ վառելանիւթ և այժ արդիւնաբերող առարկայ, ինչպէս է նաւթը, այնուամենայնիւ ելեկտրական շարժիչները սաստիկ տարածվում են նաւթաշրջանում։ Այդ մեքենաների մեծ առաւելութիւններից մէկն էլ այն է, որ նա աւելի ապահով է պահում գործարանները հրդեհից, որի վնասները շատ մեծ են և երբեմն անուղղելի։

—

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Պետերբուրգում այս օրերս տեղի ունեցաւ այն յանձնաժողովի առաջին նիստը, որ զբաղված է ուսումնարանական պրոգրամների քննութեամբ։ Այդ յանձնաժողովը նպատակ ունի դիւրացնել հին լեզուների պրոգրամը. նոյնպէս զբաղված է քննութիւնների հարցով։

—

«С. Пет. Вѣд.» լրագրին հաղորդում են, որ Պիրոգովի յիշատակին ռուսաց բժիշկների ընկերութիւնը ներկայացրեց արդարադատութեան մինիստրութեանը մի միջնորդութիւն՝ մարմնական պատիժը վերացնելու Ռուսաստանի ամբողջ զինական ազգաբնակութեան համար։

—

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Կոնսիստորիայի նախանդամ Մատթէոս վարդապետը աշխատում է մօտից ծանօթանալ վիճակի գործերի հետ։ Նա եռանդով գործում է և ժողովուրդն էլ, առանց ուշադրութիւն դարձնելու երկչոտ և անգոյն մարդկանց բամբասանքի վրա, աջակցում է նրա ամեն մի գործին»։

—

ՂՈՒԲԱՑԻՑ մեզ գրում են. «Անցեալ տարվայ ամառը Ղուբայի գաւառում երևացած մորեխը զգալի վնասներ հասցրեց մեր գիւղացիներին և կարող էր այս տարի էլ վտանգ սպառնալ, եթէ չուտով միջոցներ ձեռք չառնվէին նրա դէմ։ Բանից երևում է, որ մորեխը աշնանը ձու է ածել Իլխիչի, Խանլուղ-օբա և Քէյմուրազ գիւղերում։ Գաղտնիքը բացվում է հետևեալ կերպով։ Իլխիչցի մի թուրք մի օր բանելու համար դաշտ է գնում և այնտեղ տեսնում է տարօրինակ մի բան.—չակօսած, չը վարած, պլնդ հողի վրա գտնում է կնոնաձև տոպրակներ մանր կարմրագոյն ձուաներով. վերցնում է այդ տոպրակներից, կարմրագոյն ձուաները սպիտականում են և իսկոյն հեղուկանում։ Զարմացնում է այդ երևոյթը գիւղացուն և հրաւիրում է միւս գիւղացիներին էլ իր մօտ ցոյց տալու. վերջը հասկանում են, որ գտածը՝ գիւղացիների թշնամի մորեխն է։ Ցայտնում են գաւառապետին և յետոյ սկսում են ընդհանուր օգնութեամբ քանդել հողը և մորեխի ձուաներ հաւաքում են տասը պուդաչափ և ածում են մեծ-մեծ տոպրակների մէջ։ Շուտով կը բերեն քաղաք այրելու համար։ Անցեալ տարի մորեխը վնասներ հասցրել է Իլխիչի գիւղացիներին՝ ոչնչացնելով 7000 խուրձ բրինձ. նաև վնասներ է հասցրել Խանլուղ-օբա և Քէյմուրազ գիւղերին»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿԵՂԾՈՒՄՆԵՐ

—

Ֆրանսիական «Cloche» լրագիրը հրատարակել է Դրէյֆուսի գործի քննութեան ժամանակ երևան եկած կեղծումների հետևեալ ցուցակը։

1) Մէկ դոկումենտ, 1896 թւի հոկտեմբերի 31-ից, որը կեղծել էր Անրի՝ Պատի-դը-Կլամի մասնակցութեամբ կամ Պատի-դը-Կլամ Անրիի մասնակցութեամբ, որի մէջ Դրէյֆուսի անունը գրված է լիովին։ Այդ դոկումենտը յայտնի է «Անրիի կեղծում» անունով։

2) Մի դոկումենտ, որ ստացված է եղել խուզարկու դրասենեակում 1894 թւի ապրիլ ամսին, և ցոյց է տրված գեներալ Գոնզին մի այն սեպտեմբեր թէ հոկտեմբեր ամսին 1896 թւի, առանց Պիկարի գիտութեան, նախապէս փոխելով ազգանունը (ազգանունը փոխել են Դ. տառով)։

3) «Վէյլէր» ստորագրութեամբ մի կեղծ նամակ, որը մայոր Կինիէ Պատի-դը-Կլամին է վերագրում և որը գրված է եղել Դրէյֆուսին կործանելու նպատակով։ Այդ նամակի հետևանքը այն եղաւ, որ այն ժամանակվայ մինիստր Լէբոն հրամայեց Դրէյֆուսի ոտները շղթայել։

4 և 5) «Blanche» և «Speranza» ստորագրութեամբ հեռագիրները, որ ուղարկել է Պատի-դը-Կլամ, Էստերհազիի և օր. Պէի մասնակցութեամբ՝ Պիկարին կործանելու նպատակով, որը այդ միջոցին գտնվում էր Տունիսում։

6) «Eclair» լրագրում 1896 թւի սեպտեմբերի 10 և 15-ից տպված յօդուածները, որոնց ներշնչողը եղել է Դը-Պատի (կամ Անրի) և որոնց մէջ «այդ անիրաւ Դ» նախադասութիւնը, որը չէր կարելի կպցնել Դրէյֆուսին, փոխել էին այսպէս՝ «Այդ անասուն Դրէյֆուս շատ է պահանջող դառնում»։

7) Մի նամակ փոխ-գնդապետ Կորդիէի ստորագրութեամբ, որը ուղարկվել է Մաթիէ Դրէյֆուսին Բէլֆօր՝ այդ օֆիցէրին վնասելու նպատակով (նամակը բռնել է գեներալ Բօժէ)։

8) Դրէյֆուսի չինցու նամակները գերմանական կայսրի անունով և կայսրի նամակները Դրէյֆուսին, որոնց հրատարակելը որպէս թէ պէտք է առաջ բերէր պատերազմ և որոնք այնքան կոպիտ կերպով էին կեղծված, որ նրանց գոյութիւնը այժմ հերքում են, և աշխատեցին անհետացնել նրանց։

9) Պանիցարդիի հեռագիրը 1894 թւի նոյեմբերի 2-ից, որը թարգմանել է արտաքին գործերի մինիստրութիւնը այսպէս. «Եթէ կապիտան Դրէյֆուս ձեզ հետ յարաբերութիւն չէ ունեցել, աւելի լաւ կը լինէր հրատարակել պաշտօնական հերքում մամուլի քննութիւնից խուսափելու նպատակով» և որը երեք տարուց յետոյ գլխաւոր շտաբը փոխել է այսպէս. «Կապիտան Դրէյֆուս բանտարկված է։ Զինուորական մինիստրը ապացոյցներ ունի, որ նա Գերմանիայի հետ յարաբերութիւններ է ունեցել։ Իմ կողմից ձեռք են առնված ղղուշութեան բոլոր միջոցները»։

10) Գոնզի կեղծումը, որը մտցրած է գաղտնի «dossier»-ի մէջ և որը դիտմամբ յեղաշրջում է Գաղօմարի և Պէնդեվի մէջ տեղի ունեցած խօսակցութիւնը (Դրէյֆուսի մասնաւոր կեանքի առիթով)։

11) Petit bleu հասցէի մէջ քերված տեղը, որը Պիկարին առիթ է տուել Էստերհազիին հետամուտ լինելու։ Հասցէն քերել են, որպէս զի կասկած յարուցանվի, թէ Էստերհազիի անունը մտցրված է ուրիշ անուան տեղ։

13) Լէբրէն-Բէնոի զեկուցումը, որը գրվել է Դրէյֆուսի պաշտօնազուրկ լինելուց երկու թէ երեք տարուց յետոյ, մի զեկուցում, որը ներկայացնում է կեղծ վկայութիւն։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ Կ. Պոլիս գնացին Ժընէվի հայկական կոմիտեի անդամները, որոնք նպատակ ունեն բանակցել թիւրք կառավարութեան հետ՝ հայոց դրութիւնը բարւոքելու միջոցների մասին։ Այդ բանակցութիւնները կը վարեն Արթին-փաշան և Բէրայի նահանգապետ Էնվէր-փաշան։ Կոմիտեի պատգամաւորները գրաւոր խոստմունքներ տուեցին, թէ կոմիտեսը հանգիստ կը մնայ և բռնի միջոցների չի դիմի։

—«Berl. Local Anzeiger» լրագրի թղթակիցը խօսակցութիւն ունէր Պետերբուրգի պարսից դեսպան Միրզա Ռիզա խանի հետ վերջերս արտասահմանի լրագիրներում տպված այն լուրերի առիթով, թէ Պարսկաստանը զիջել է Ռուսաստանին Բէնդէր-Աբասի նաւահանգիստը Հընդկական ովկիանոսում։ «Ես ստացայ,—ասեց դեսպանը,—հաղորդագրութիւն իմ կառավարութիւնից, թէ այդ առարկայի վերաբերմամբ Ռուսաստանի հետ ամենևին բանակցութիւններ չեն եղել և թէ Բէնդէր-Աբասը Ռուսաստանին զիջելու կամ կապալով տալու լուրը կատարելապէս անհիմն է։ Ինչ վերաբերում է երկաթուղու գիծ անցկացնելուն, որի մասին նոյնպէս լուրեր էին տպված լրագիրներում, Միրզա Ռիզա-խանը պատասխանեց հետևեալը. «Այդ լուրը, թէպէտ և ժամանամանօրէն վերաստուգված չէ, համապատասխանում է իրականութեանը, բայց քաղաքական որ և է բարդութիւններին առիթ չէ կարող տալ։ Պարսկաստանի վրայով Կասպից ծովից մինչև Պարսկական ծոցը երկաթուղի անցկացնելու ծրագիրը նոր չէ. 30 տարի արդէն դրա մասին խօսք կայ։ Դեռ 1872 թւին անգլիացի Ռէյտերին կօնցէսիա տրվեց այդ ճանապարհի համար։ Պայմանագրի հաւաձայն երկաթուղին պէտք է անցնէր Աբուշէրից Կասպից ծովի վրա մինչև Կէշտ, որ նաւահանգիստ է Պարսից ծոցում, դէպի Ֆարսիստան։ Եւ որովհետև այն ժամանակից կօնցէսիան անիրագործելի մնաց, այդ պատճառով էլ նա չեղած յայտարարվեց։ Այդ ժամանակից քսան տարի առաջ, ռուս գեներալ Ֆալկէնգագէն սկսեց աշխատել ձեռք բերելու նոյնպիսի մի կօնցէսիա, բայց չը կարողացաւ հաւաքել անհրաժեշտ դրամագլուխներ։ Մի քանի տարի առաջ ռուսաց ձեռնարկողները նորից ստացան նոյն կօնցէսիան, և որովհետև ներկայումս նրա պայմանաժամը լրանում է, բնական է, թէ այժմ ինժենէրներ են եկել՝ ձեռնարկութիւնը իրագործելու և ճանապարհները հետազօտելու համար։ Արևելեան քաղաքականութեան ընդարձակ հորիզոնների հետ այդ բուն տնտեսական և կուլտուրական ձեռնարկութիւնը ոչինչ առնչութիւն չունի։ Մենք ոչինչ բան չենք տեսել, որից կարելի լինէր եզրակացնել, թէ Ռուսաստանը կամենում է իր արևելեան քաղաքականութիւնը վարել այնպիսի ուղղութեամբ, որ վտանգաւոր լինէր Պարսկաստանի անձեռնխեղութեան և անկախութեան համար։ Բացի դրանից մենք Ռուսաստանի և Անգլիայի հետ ամենալաւ յարաբերութիւնների մէջ ենք գտնվում և մենք վախենալու ոչինչ չունենք։

—«Новости» լրագրին հեռագրում են, որ գերմանական կառավարութիւնը ներկայացրել է անցեալ շաբաթ ֆրանսիական արտաքին գործերի մինիստր Դէլկասէին ապացոյցներ Դրէյֆուսի կատարեալ անմեղութեան և Անրիի յանցաւորութեան մասին։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Русск. Вѣд.» լրագրի Բերլինի թղթակիցը, ապրիլի 20-ից, ի միջի այլոց գրում է. «Պէտք է յիշել մի խոշոր կորուստի մասին, որ ունեցաւ Բերլինի հաւալսարանը։ Այս շաբաթ նա թաղեց իր այն «հին պրոֆէսորներից» մէկին, որոնց մասին ցաւելով ասում են, թէ նրանց թիւը գնալով պակասում է, և թէպէտ կենդանութեան ժամանակ նրանց վրա երբեմն ծիծաղում են, որպէս տարօրինակ մարդկանց վրա, բայց առանց այդ օտարոտի մարդկանց չէր լինի գերմանական գիտութեան փառքը։ Ես խօսում եմ Հէնրիխ Կիպէրտի, հռչակաւոր քարտէզագրի մասին, որ վախճանվեց 81 տարեկան հասակում, մի կեանք, որ լի էր յաժառ և օգտակար աշխատութեամբ։ Սիրելի աշակերտ Կ. Բիտտէրի, գերմանական առաջին գիտնականի, որը բարձրացրեց աշխարհագրութիւնը համալսարանական անկախ գիտութեան բարձրութեան վրա, Կիպէրտ իր մասնագիտութեան վերաբերեալ ֆէնոմէնալ գիտութիւնները միացնում էր պատմական և լեզուագիտական ամենարնդարձակ տեղեկութիւնների հետ։ Ասում են, որ նա գիտէր 17 լեզուներ։ Էլլադայի և յունական

կոլոնիաների իր քարտէզի համար նա մի քանի տարի անցկացրեց Ցունաստանի հնագիտութեան ուսումնասիրութեան վրա, այնպէս որ որ իր ծանօթութեամբ այդ առարկայի հետ կարող էր մրցել Կուրցիուսի հետ։ Իսկ Մոմզէն հաւատացնում էր, թէ Կիպէրտից դեռ շատ բան կարող է սովորել ինքն հռոմէական պատմութեան մասին։ Հանդուցեալ աշխարհագրի անունը սերտ կերպով կապված է Փոքր-Ասիայի հետ, որի քարտէզագրութիւնը նրա ձեռքերի արդիւնքն է, հետևանք անձնական դիտողութիւնների և պատմական աղբիւրների անընդհատ ուսումնասիրութեան։ Կիպէրտ արդէն 70 տարեկան էր, երբ նա կատարեց իր չորրորդ ճանապարհորդութիւնը դէպի Փոքր-Ասիա, և մի քանի ամիսների ընթացքում ծերունին օրական 10 ժամ էր անցկացնում ձիու վրա, քարտէզը և մատիտը ձեռքում անցնելով ամենաանտանելի ճանապարհներով։ Այդ գիտնական աշխարհագիրը և հնագէտը նշանաւոր նկարիչ էլ էր, այնպէս որ ձիու թամբի վրա այնպէս էր նկարում հետազօտված տեղը, կարծես թէ իր գրասեղանի առաջ նստած լինէր։ Սատիկ սիրելով իր գիտութիւնը՝ Կիպէրտ 80 տարեկան հասակում ևս չէր դադարում աշխատելուց, չը նայելով որ նրան ևս չը խնայեցին ծերութեան սովորական ուղեկիցները—խրոնիական հիւանդութիւններ, լսողութեան և տեսողութեան թուլութիւնը։ Դեռ անցեալ տարի նա Բերլինի հմտալսարանում, ունկնդիրների փոքրաթիւ չըջանի առաջ, կարդում էր իր սովորական դասընթացքը, գալիս էր գիտութիւնների ակադեմիան, և երբ բարեկամները մտնում էին նրա մօտ, գտնում էին նրան աշխարհագրական քարտէզների և գրքերի առաջ նստած պարապելիս։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

28 ապրիլի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ներքին գործերի մինիստրը որոշեց արգելել «Русскій Листокъ» լրագրի հատով վաճառումը։

Այսօր լոյս տեսաւ «Россія» լրագրի առաջին համարը, Սազոնովի խմբագրութեամբ։

ՊԱՐԻԶ։ «Temps» լրագիրը հաղորդում է, թէ հէնց որ մանաւոր հեռագիր ստացվեց Տէնէրիֆից Մեծ Բասամում ժամանակաւոր երևալու մասին, խմբագրութիւնը իսկոյն դիմեց տեղեկութիւնների համար գաղթականութեան մինիստրութեան, որտեղից յայտնեցին, թէ արդարև մանվան երկու կասկածելի դէպքեր եղել են Մեծ Բասամում, բայց կատարած քննութիւնը ցոյց տուեց, որ մահը պատահել է տենդից։

ՊԱՐԻԶ։ Վճռաբեկ դատարանի կոմիտէի այսօրվայ կայացած ժողովում Բալլո-Բոպրէ յայտնեց, թէ ինքն կարող կը լինի Դրէյֆուսի գործի վերաքննութեան վերաբերեալ զեկուցումը ներկայացնել Հոգեպալատեան օրը։ Կոմիտէը վճռեց, թէ երկուշաբթի, մայիսի 17-ին, կը կայանայ հրապարակական նիստ, ուր կը քննվի վերաքննութեան վերաբերեալ խնդիրքը։ Կարծում են, որ զեկուցման ընթերցանութեան, պրոկուրորի նկատողութիւնների համար կը պահանջվի չորս նիստ, և թէ վճիռը կը կայանայ հետևաբար, հետևեալ ուրբաթ կամ շաբաթ։

«Հաւասի գործակալութեան հեռագրի մէջ Տանտարարիվից հաղորդվում է, որ գեներալ Գալլիէնի գնում է Ֆրանսիա՝ 60 միլիոն փոխառութեան մասին բանակցելու համար, որ անհրաժեշտ է երկաթուղիական կառուցումներ և այլ աշխատանքներ կատարելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ապրիլի 28-ին կայացաւ գվարդիայի և Պետերբուրգի զինուորական չրջանի զօրքերի զօրահանդէս։ Եղանակը գեղեցիկ է։ Տեսարանը հրաշալի է։ Զօրահանդիսին Արքայական վրանից նայում էին Մեծ Իշխանուհի Մարիա Պավլովնա, Մեծ Իշխանուհի Եկատերինա Վլադիմիրովնա, Սակսէն-Ալտենբուրգեան Եկատերինա Գէօրգիևնա պրինցուհին և Մեծ Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչի որդիքը։ Զօրահանդիսից յետոյ, Օլդենբուրգեան պրինցի պալատում տեղի ունեցաւ Բարձրագոյն նախաճաշ։ Ապա Թագաւոր Կայսրը վերադարձաւ Ցարսկոյե-Սէլօ։

ՄՕՍԿՎԱ։ Պուշկինեան յանձնաժողովի 13-րդ նիստում, պրոֆէսսոր Կիրպիչնիկովի նախագահութեամբ, ներկայ էին բանաստեղծի որդին և թոռը։ Հաղորդվեց Պուշկինի ցուցանդէսի համար նոր առարկաների մասին։ Մանաւանդ լիակատար և հետաքրքիր կը լինի բանաստեղծի պատկերների և կիսաբձանների բաժինը։

ԽԱՐԿՈՎ։ Այսօր սկսվեցին քննութիւններ հմտալսարանի իրաւաբանական քննիչ յանձնաժողովում, Մոսկվայի համալսարանի պրոֆէսսոր Սվէքսէևի նախագահութեամբ։ Քննութիւններին ենթարկվելու համար խնդիրքներ են տուել 85 անձինք։

ԿԱԶԱՆ։ Այսօր Պիրոգովի յիշատակին ռուսաց բժիշկների եօթերորդ համագումար ժողովը բացվեց կազմակերպող յանձնաժողովի նախագահ պրոֆէսսոր Դէի ճառով։ Օրկեստրը երեք անգամ կրկնեց օրհներգը։ Ընտրված են. պատուաւոր նախագահ պրոֆէսսոր Տարնովսկի, նախագահի օգնական բժիշկ Դոլժենկով, առաջին պատուաւոր քարտուղար-պրոֆէսսոր Բոբրով, երկրորդ Մոչետկովսկի։ Ապագայ համագումարը նշանակված է Մոսկվայում 1901 թւի դեկտեմբերին։ Ժողովի նախընթաց օրը անդամների մէջ ժողովված է 5000 ռուբլի, անբերրիութիւնից վնասվածների օգուտին։ Ժողովի բացման ներկայ էին ընդամենը 500 անդամներ, որոնցից 113 տեղացիներ էին։

ՎԻԵՆՆԱ։ Ռուսաց զինուորական հրամանատար գնդապետ Վօրոնին ճանապարհ ընկաւ այսօր դէպի Պլէվլիէ, որպէս զի, Ռուսաց Կայսրի պատուէրի համաձայն, յանձնէ № 2 գնդին, որի չէֆն է համարվում Թագաւորը, Նորին Մեծութեան պատկերը, ամբողջ հասակով և գնդի գնդապետի զգեստով, Ս. Սէրգեանի ժապաւէնով։

ՊԱՐԻԶ։ «Echo de Paris» լրագիրը հաւատացնում է, որ վճռաբեկ դատարանի բիւրօն ծանօթացել է բազմաթիւ գօկումէնտների հետ, որոնց նա անուշադիր թողեց. նմանապէս լսեց Կիւինէին, որ ներկայացրեց մի գօկումենտ, որը ապացուցանում է, թէ բորդէրօ կազմելու միջոցին, նոր թնդանօթի ձևը գաղտնի էր։ Բալլո-Բոպրէ կը ներկայացնի իր զեկուցումը մայիսի 8-ին, վիճաբանութիւնները կը սկսվեն մայիսի 17-ին։ Գեներալ պրոկուրը իր մեղադրական ճառը կարդասանի մայիսի 18-ին, Մօրնարի պաշտպանողական ճառը տեղի կունենայ մայիսի 19-ին, վճիռը մայիսի 20-ին։ Ուրիշ լրագիրների ասելով, վճիռը կը կայանայ մայիսի 23-ին։

29 ապրիլի

ԲԵՐԼԻՆ։ Շվէդական թագաւորը խնդրեց երէկ պնտական քարտուղար Բիւլովին այցելել Նորին մեծութեանը չվէդ-նորվէգական դեսպանի բնակարանում։ Բիւլովի այցելութիւնը երկու ժամ տևեց։

ՊԱՐԻԶ։ Առաջին մեծ պաշտօնական ճաշը Ֆորի մահից յետոյ Ելիսեան պալատում տուեցին հանրապետութեան նախագահը և տիկին Լուբէ։ Ներկայ էին օտար դեսպանները, որոնց թւում իշխան Ուրուսովն։ Ապա տեղի ունեցաւ դիպլոմատիական մարմնի ընդունելութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ ցերեկվայ 4 ժամին և 15 րոպէին. Թէֆլէս է հասնում առաւօտեան 8 ժամ 38 րոպէին դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ առաւօտեան 9 ժամ և 20 րոպէին. Բաթում է հասնում երեկոյեան 8 ժամ և 52 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ երեկոյեան 10 ժամ 50 րոպէին. Թէֆլէս է հասնում երեկոյեան 5 ժամ և 9 րոպէին։ Դուրս է գնում ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԹՈՒՄ՝ երեկոյեան 6 ժամ 10 րոպէին. Բաթում է հասնում առաւօտեան 7 ժամին։

Մարդատար № 2 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ՝ առաւօտեան 8 ժամ՝ 30 րոպէին. Թէֆլէս է հասնում՝ երեկոյեան 8 ժամ 30 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս երեկոյեան 9 ժամ 15 րոպէին. Բաքու է հասնում ցերեկվայ 12 ժամ 59 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը դուրս է գալիս ԲԱԹՈՒՄԻՑ դէպի ԹԻՖԼԻՍ երեկոյեան 8 ժամ 40 րոպէին. Թէֆլէս է հասնում առաւօտեան 9 ժամ՝ 55 րոպէին։ ԹԻՖԼԻՍԻՑ դէպի ԲԱԳՈՒ է դուրս գալիս առաւօտեան 11 ժամ 20 րոպէին. Բաքու է հասնում՝ առաւօտեան 5 ժամ 42 րոպէին։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրոնցօվի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդային հ.
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—11—12 ժ. կանանց հիւանդ.
Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍՈՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1½—2½ ժ. ներքին և միասեռական հ.
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
Վ. Մ. ՄԱԽՎԻԼԱՁԷ—5—6 ժ. ներքին և երեխայոց հ.
Ա. Ն. ՇՊԱԿՈՎՍԿԻ—6—7 ժ. նեարդային (եւլեկտրաբուժութիւն), վեներական և մորթի հ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—6½—7 ժ.
Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՈ հիւանդանոցումը քիմիական և խաչաբացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խիպ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. չքաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
129—150 Բժշկապետ ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ

Այսօր, ուրբաթ, ապրիլի 30-ին, տեղի կունենայ
ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԿՐՈՒԺՕԿՈՒՄ
յայտնի դաշնակահար
Ի. ՍԼԻՎԻՆՍԿՈՒ
ԵՐԿՐՈՐԴ ԿՕՆՑԵՐՏԸ
Սկիզբն է ժամի 9-ին երեկոյեան։ Տոմսակները կարելի է ստանալ Բ. Միրիմանեանի խանութում։ 1—1

Կովկասի ՀԱՑՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
գրադարան-ընթերցարան
(Միջին փողոց, տ. Տէր-Աստուրովի, Աղելխանեանի մագազինի գլխին), բաց է առաւօտեան ժամը 9—2 և երեկոյեան ժամը 5—9։ Ստացվում են մայրաքաղաքների և տեղական բոլոր թերթերը։ Մուտքը 2 կոպ., ամսով 40 կ. աշակերտներից կէս վճար։ 35—50

Լոյս տեսաւ
Ե. ՊԱՐՈՆԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
Բ.
ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Կատակերգ. երգախառն ի հին դարս։
Հրատ. Գիւտ ա. քահ. ԱՂԱՆԵԱՆՑ
ԳԻՆԸ 50 ԿՕՊ. 3—3

ԱԶԴ
Յակոբ (Զատօ) Նատրեան, 30 տարեկան, և Յարութիւն Միրզոյեան, 21 տարեկան, Ողմըցիները, 1896-ի ամրան Մարսէյլէն վերադարձած են Ռուսաստան։ Կը խնդրուի տեղեկութիւն ունեցողներէն՝ հաղորդել հետևեալ հասցէին—
Apraham Kalousdian 233 Walnut st. Chelsea Mass. U. S. America. 3—3

Այսուհետև անվաւեր եմ համարում այն բոլոր ՀԱՒԱՏԱՐՄԱԹՔԵՐԸ, որոնք մինչև այժմ տուած եմ զանազան անձանց։
2—2 Սողոմոն Ս. Հասրաթեանց

Տպագրութեան է յանձնված
ԿԱՄԻԼԼ ՓԼԱՄՄԱՐԻՈՆԻ
ՈՒՐԱՆԻԱ
Նշանաւոր աստղագիտական վէպը, 366 էջ
թարգ. Հ. Առաքելեանի
Բացված է այժմ բաժանորդագրութիւն—1 ռուբլի։ Տպագրութիւնից յետոյ գինը կը լինի 1 ռ. 50 կ.։ Բաժանորդ գրվել ցանկացողները մինչև սեպտեմբերի 1-ը պէտք է յայտնեն, ուղարկելով 1 ռուբլի այս հասցէով, Թիֆլիս, Հրատ. Ընկ. գրասենեակ, Գալուստ Գալստեանցին։ (ւ.) 4—10

ԿԱԶԱՆԻ
ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԴՊՐՈՑ
Խնդիրների ընդունելութիւն բժշկապետ Օ. Ն. Նատանսօնի անունով 1899 թւի մայիսի 15-ից։ (ո.) 3—3

ՄԻ ԽՄԲԱՊԵՏ
անցած լինելով պ. Եկմալեանի մօտ խմբապետի կուրս և հմուտ եկեղեցական արարողութիւններին՝ ցանկանում է հայոց եկեղեցիներում տեղ ունենալ։ Դիմել՝ Վլադիկաւկազ, Գէորգ Ղուլիջանեանին։ 2—5

Պարսկաստանի Ղարադաղ գաւառի Խչլաղ գիւղէն
Պետրոս կամ Մարտիրոս Խաչատուրեան Պապաճանով անձ մը, որ Բոստով Դոնի վրա չըջանի Զալթըր գիւղը կը բնակէր և հոն ամուսնացած ու ընտանիք մը կազմած էր մանտրտիկ երեխաներով և առուտուրի գործով միշտ Բաթում կերթևեկէր՝ տարի մը կայ, որ վերջի երթն է եղած հոն, և անկէ ալ չէ վերադարձած։
Ո՛վ որ գիտէ յիշեալ ընտանիքի տիրոջ ուր ըլլալը, կամ թէ ինչ արկածի դուցէ հանդիպելը՝ բարեսրտութիւն ընէ «Մշակի» միջոցով յայտնելու։ 2—3

ՄԻ ՕՐԻՈՐԴ,
որ գիտէ հայերէն, ռուսերէն և վրացերէն, ցանկանում է ունենալ խանութներում ԿԱՍՍԻՐՇԱՑԻ պաշտօն։ Հասցէն «Մշակի» խմբագրատուն։
(ե.) 3—3

Յաղագս տալոյ 'ի վարձու զերկրային բերս գիւղօրէից Մայր Աթոռոյ Յատենի Սինոդի Ս. Էջմիածնի նշանակեալ է աճուրդ և կրկնաճուրդ ըստ այսմ. Վաղարշապատայ 'ի 10 Մայիսի և 'ի 15 նոյն ամսոյ, Օշականայ 'ի 12 Մայիսի և 'ի 20 նոյն ամսոյ, Եղուարդայ 'ի 16 Մայիսի և 'ի 20 նոյն ամսոյ, Մաստարայի 'ի 22 Մայիսի և 'ի 26 նոյն ամսոյ։ Յանկացողք ունելոյ զայդոսիկ գիւղօրայս 'ի վարձու կարեն 'ի ժամուն ներկայ գտանել 'ի Սինոդի հանդերձ գրաւականօք։
1—3 (ո. չ. ե.) Անդամ կոնսիստորիայի՝ Թադէոս Վարդապետ

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ
ԼԷՕ
ՄԷԼԻՔԻ ԱՂՋԻԿԸ
(Պատմական վէպ, 755 երես)
Գինը 1 ՌՈՒԲ. 30 ԿՕՊԷԿ (ոսկեկազմ 2 ռուբլի)
Ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ—հեղինակի մօտ («Մշակի» խմբագրատունը) և Կենտրոնական գրավաճառանոցում։ ՇՈՒՇՈՒՄ—Բագրատ Տէր-Սահակեանցի գրավաճառանոցում։—ԲԱԳԻՈՒՄ պ. Ներսէս Դաւթեանցի մօտ, Ա. Ի. Աղամալի գրասենեակում։
Հեղինակի հասցէն՝ ТИФЛИСЪ, редакція „Мшакъ“. 9—10

4—26


Գիւղատնտեսական գործիքներ եւ մեքենաներ
Լ. ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ
250 նկարով։ Գինն է 50 կոպ.
Դիմել՝ Тифлисъ, Обществу Изданія Армянскихъ Книгъ. (ե. ո.) 32—50

Дозволено цензурою, Тифлисъ, 29 Апрѣля 1899 г.
Типографія Грузинск. Издат. Т.—ва Орбеліановская ул., № 27.